

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻՒԿԻՈՑ ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
«ԲԱԶՄԱՎԷՊ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԷՍԻ
175-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

Հայաստանի Հանրապետության Սփիւռփի Նախարար Տիար Մը-
խիթար Հայրապետեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմա-
ցանք, որ «Բազմավէպ» հայագիտական հանդէսի 175-ամեակին առի-
թով յառաջիկայ Հոկտեմբեր 19-20, 2018-ին, գիտաժողով մը տեղի
պիտի ունենայ Երեւանի մէջ՝ Սփիւռփի Նախարարութեան, Գիտու-
թիւններու Ազգային Ակադեմիայի եւ Վեցեոթիկի Մխիթարեան Միա-
բանութեան համատեղ կազմակերպութեամբ:

Ձերմօրէն կ'ողջունեմք այս հաւաքական նախաձեռնութիւնը՝
լուսարձակի տակ բերելու «Բազմավէպ»ի վերջին 175 տարիներու ի-
րագործումը ընդհանրապէս հայ մշակոյթի ու յատկապէս հայ գիտա-
կան բնագաւառէն ներս: Արդարեւ, հպանցիկ ակնարկ մը «Բազմա-
վէպ»ի յաջորդական թիւերուն վրայ, յստակօրէն մեր առջեւ կը պարզէ
այն եզակի նպաստը, զոր ան բերած է հայագիտութեան: «Բազմա-
վէպ»ի մէջ ներառուած յօդուածները սովորական գրութիւններ չեն,
այլ գիտական, բանասիրական ու ակադեմական արժէք ունեցող աշ-
խատասիրութիւններ: Հի'շդ է, «Բազմավէպ»ի նախաձեռնութիւնն ու
հովանաւորութիւնը կը պատկանին Մխիթարեան միաբանութեան:
Հի'շդ է նաեւ, որ Մխիթարեան հայրեր տիրական ներկայութիւն դար-
ձած են «Բազմավէպ»ի էջերուն վրայ: Սակայն, հարկ է կարեւորու-
թեամբ շեշտել, որ «Բազմավէպ»ը դարձած է հայագիտական բարձր-
րակ ամպիոն, ուր հանդէս եկած են հայ թէ օտար հայագէտներ իրենց
գիտական աշխատանքներով ու բանասիրական պրպտումներով: Այլ
խօսքով՝ նեղ պարունակի մէջ չէ մնացած «Բազմավէպ»ը. ան դարձած
է խթան հայագիտական լուրջ աշխատասիրութիւններու, միաժամա-
նակ լայն կարելիութիւններ ընծայելով անոնց հրատարակութեան:

«Բազմավէպ»ը մնայուն ներկայութիւն դարձած է հայագէտնե-
րու սեղաններուն վրայ ու հայագիտական կեդրոններու մատենադա-

քաններուն մէջ: Մենք անճնապէս Դպրեվանքի թէ համալսարանի մէջ Մեր ուսանողութեան օրերուն, առիթը ունեցած ենք դիմելու «Բազմավէպ»ին մէջ հրատարակուած ուսումնասիրութիւններուն:

Այս առիթով, Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք Միփաբեան Միաբանութեան, հայագիտութեան մարզէն ներս իրենց ունեցած կարեւոր դերին՝ իրենց նախնաճեմած բազմաթիւ աշխատասիրութիւններու ու լոյս ընծայած հրատարակութիւններու, եւ յատկապէս «Բազմավէպ»ի ճամբով: Ներկայ պայմաններու ազդեցութեան տակ հայագիտութեան նկատմամբ տակաւ նուագող հետաքրքրութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, անհրաժեշտ է որ շրջուի: Հայագիտութեան դաշտէն ներս տակաւին անկոխ գետիներ եւ պրպտումի ու քննարկումի կարօտ նիւթեր գոյութիւն ունին: Անհրաժեշտ է որ անոնք լուրջ ուսումնասիրութեան ենթարկուին: Զսպասենք որ միայն օտարներ կատարեն այս յոյժ կարեւոր աշխատանքը, որքան ալ գնահատելի ըլլայ իրենց նպաստը հայագիտութեան: Սա առաջին հերթին մեր հոգեւորականներուն ու հայագէտներուն պարտաւորութիւնն է: Արդ, սպասելի է որ «Բազմավէպ»ը վերանորոգ նուիրումով շարունակէ իր կարեւոր ներդրումը հայագիտութեան:

Հայրապետական Մեր բարձր գնահատանքով անգամ մը եւս կ'ողջունենք այս կարեւոր ամեակը հայագիտութեան, ինչպէս նաեւ Միփաբեան միաբանութեան մշակութային առաքելութեան ծիրէն ներս: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ միշտ կազմակերպ ու կենսունակ պահէ Միփաբեան Միաբանութիւնը իր առաքելութեան ճամբուն վրայ:

Հայրապետական օրհնութեամբ,



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

9 Հոկտեմբեր 2018
Անթիլիաս, Լիբանան